ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«16» 09 2021թ. N 20/1003

«Հայր և Որդի Ջիլավյաններ» ՍՊԸ
Վ. Հայրապետյանին

ՀՀ Տավուշ, Այրում համայնք, գ. Հաղթանակ
1-ին փող. 2-րդ նրբ. 3-րդ շենք
Էլ. հասցե՝ jilavyanmartin@gmail.com
ՀՎՀՀ 07621455

Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Հայր և Որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի միջև 31.05.2021թ. կնքված ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ԿԱՀՈՒՅՔ/1 (11/276-2021) պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 2021թ ընթացքում, ընկերությունը պարտավորվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրի-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը՝ (N 2 չափաբաժնով՝ 945 000 (ինը հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 7 հատ չիրկիզվող պահարաններ, սակայն մինչ օրս չի մատակարարվել և 13.09.2021թ. գրությամբ «Հայր և Որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ն հրաժարվել է մատակարարել վերոհիշյալ ապրանքը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.-րդ կետը, որի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարն էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.7-րդ կետի՝ «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոնշյալ Պայմանագրի 2.1.7.1. կետը և Պայմանագրի 8.9 կետը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեակացնում ենք, որ «Հայր և Որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի համաձայնագրերը՝ Հավելված N 4.2 և Հավելված N 5.1) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցել 236 250 (երկու հարյուր երեսունվեց հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որպես տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումար:

Հարգանքով՝

Ա. Հակոբյան

Հեռ. (015) 579-487